ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր 14.11.2018թ. հ. 01/09Մ գրության՝ Աջափնյակ վարչական շրջանի Հասրաթյան-Առաքելյան փողոցների հատման հատվածում վերգետնյա անցում կառուցելու համար մի խումբ բնակիչների կողմից ներկայացված խնդրանքի կապակցությամբ, տեղեկացվում է.

Վերոհիշյալ տարածքի բնակիչները բազմիցս դիմել են Երևանի քաղաքապետարան նշված խնդրանքով: Հետիոտնի շարժման անվտանգության խնդրի լուծման նպատակով 2017 թվականին Հասրաթյան փողոցում (Սիլիկյան խճուղու հատման հատվածում) պատվիրվել է վերգետնյա հետիոտնային անցում կառուցելու համար նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնք կատարվել են:

Հաշվի առնելով, որ վերջին տարիներին վերգետնյա անցումները կառուցվում են մասնավոր ներդրողների հետ համագործակցության արդյունքում, աշխատանքներ են տարվում համապատասխան ներդրողներ գտնելու համար:

Ինչ վերաբերում է լուսացուցային կարգավորման իրականացման առաջարկությանը, տեղեկացվում է, որ այն առնչվում է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության լիազորություններին: Ճանապարհային ոստիկանության 19.10.2015թ. հ.17-3-20955 գրությամբ քաղաքացի Ա. Շեկյանին տրված պատասխանի համաձայն՝ Հասրաթյան փողոցի վերոհիշյալ ճանապարհահատվածում լուսացուցային կարգավորում իրականացնելու համար գործող օրենսդրությամբ սահմանված նախապայմանները բացակայում են:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ